ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 450-Ա/2 **17.04.2020թ.**

ԹԲԻԼԻՍԻԻ Պ. ԱԴԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝ Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի խաղացանկը համալրելու, Հայաստանում և Վրաստանի հայաշատ վայրերում հյուրախաղային գործունեություն ծավալելու նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի աջակցության ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1215. Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում միջազգային և սփյուռքի հետ համագործակցության զարգացում» ծրագրի «12006. Աջակցություն օտարերկրյա պետություններում հայալեզու թատերական ներկայացումներին» միջոցառման համար Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված գումարներից հատկացնել 15000.0 հազար (տասնհինգ միլիոն) դրամ՝ 2020 թվականի Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի աջակցության ծրագրի ծախսերն իրականացնելու համար:

3. Նախարարության ֆինանսաբյուջետային վարչության պետին.

սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում նախապատրաստել և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) գլխավոր քարտուղարի ստորագրմանը ներկայացնել սույն հրամանի 2-րդ կետում նշված գումարը «Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնելու մասին պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

4. Նախարարության արտաքին կապերի և սփյուռքի, ֆինանսաբյուջետային վարչությունների պետերին՝

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մարտի 16-ի թիվ 343-Ա/2 հրամանին և կնքվող պայմանագրին համապատասխան իրականացնել պայմանագրի կատարման նկատմամբ հսկողություն, պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման, բովանդակային և ֆինանսական հաշվետվությունների ընդունման և պայմանագրով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունների կազման և ստորագրման գործատուությունները:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Խզմալյանին:

Նախարար Արայիկ Հարությունյան

X

Հավելված
ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
----- ---------- 2020 թ.
N ------- հրամանի

Ծ Ր Ա Գ Ի Ր

Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի աջակցության

1. Կազմակերպության անվանումը
«Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» ՊՈԱԿ

2. Կազմակերպության գտնվելու վայրը
Երևան, Վազգեն Սարգսյան փող., 7 շենք

3. Ծրագիր
Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի աջակցության

3.1 Բովանդակությունը
Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնը սփյուռքում գործող պետական կարգավիճակ ունեցող միակ հայկական թատրոնն է և այն ծավալում է հայապահպան գործունեություն, որը խթան է հանդիսանում Վրաստանում հայ մշակույթի տարածման ու հանրահռչակման գործում:

Այս տարի թատրոնը նախատեսել է 3 նոր ներկայացման առաջնախաղ՝ Ա. Վարսիմաշվիլի «Հրեշտակը և երեքը փողկապով», Ե. Սկարոխոդովա «Մի թափեք մոխիրը հատակին», Ա. Այվազյան «Դիպլիպիտո»:

Բացի այդ՝ Գ. Խանջյանի ծննդյան 70-ամյակի կապակցությամբ նախատեսվում է բեմադրել Գ. Խանջյանի «Գերեզմանատան երգչախումբը» ստեղծագործությունը, որի առաջնախաղը կկայանա Երևանում և Թբիլիսիում:

2020 թ. ընթացքում նախատեսվում են թատրոնի հյուրախաղերը Երևանում (Թ. Բարթայայի «Գլխավոր դերը», Է. Օլբիի «Ինչ է պատահել գազանանոցում», Ավթանդիլ Վարսիմաշվիլիի «Հրեշտակը և 3-ը փողկապով»), Գավառում (Ա. Բայանդուրյանի «Աշնանային իրիկնամուտ» և «Օրը անձրևոտ» և Ավթանդիլ Վարմիշավիլիի «Հրեշտակը և 3-ը փողկապով») և Արտաշատում (Ա. Այվազյանի «Դիպլիպիտո», Ե. Սկարախոդովայի «Մի թափեք մոխիրը հատակին», Թ. Օլբիի «Ինչ է պատահել գազանանոցում»):

Թատրոնը մասնակցելու է նաև «Արտավազդ» մրցանակաբաշխությանը (Ա. Սիսյանի «Ագռավն ասաց») և պատրաստելու է 2020 թ. ամանորյա մանկական ներկայացում:

3.2 Նպատակ

Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնին աջակցության տրամադրում, սփյուռքում հայ մշակույթի պահպանում, Վրաստանում հայ մշակույթի հանրահռչակում

3.3 Անցկացման վայր

Թբիլիսի, Վրաստան

3.4 Անցկացման ժամկետ

2020 թ.

3.5 Ակնկալվող արդյունքներ

Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի գործունեության պատշաճ ապահովում
սփյուռքում հայ մշակույթի պահպանում
Վրաստանում հայ մշակույթի հանրահռչակում